

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1

Ո՞րն է հարձակման նպատակը.

1. հարձակումն անցկացվում է հակառակորդին ճնշելու, հակառակորդի կենդանի ուժը ոչնչացնելու և գերեվարելու նպատակով,
2. հարձակումն իրականացվում է հակառակորդի լիակատար ջախջախման և տեղանքի կարևոր շրջանների (օբյեկտների) գրավման նպատակով,
3. հարձակումն անցկացվում է հակառակորդին հյուծելու և տեղանքի կարևոր շրջանները (բնագծերը, օբյեկտները) գրավելու նպատակով,
4. հարձակումն անցկացվում է հակառակորդի պաշտպանությունը ճեղքելու, հակառակորդի կենդանի ուժը ոչնչացնելու և գերեվարելու նպատակով:

2

Ո՞րն է հետախուզության նպատակը.

1. իրադրության ցանկացած պայմաններում հակառակորդի և տեղանքի վերաբերյալ հետախուզական տեղեկություններ ձեռք բերելու նպատակով,
2. հավաքել տեղեկություններ հակառակորդի, նրա ամրաշինական կառույցների վերաբերյալ,
3. հավաքել տեղեկություններ հակառակորդի մարտական տեխնիկայի, անձնակազմի գործողությունների վերաբերյալ,
4. հավաքել տեղեկություններ հակառակորդի, նրա գործողությունների մասին:

3

Ինչքա՞ն է հակատանկային ականների քողարկիչ շերտի հաստությունը.

1. 3-5 սմ
2. 5-8 սմ
3. 8-12 սմ
4. 1-2 սմ

4

Ի՞նչ է պարզում զինվորը պաշտպանության ժամանակ մարտական առաջադրանք ստանալով.

1. կողմնորոշիչները, հակառակորդի կազմը, դիրքերը և կրակային միջոցների տեղաբաշխումը, դասակի, ջոկի և իր խնդիրը, հարևանների խնդիրները, դասակի կենտրոնացված կրակի հատվածները, ազդարարման, կառավարման փոխգործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, պաշտպանությանը պատրաստ լինելու ժամանակը,
2. կողմնորոշիչները, հակառակորդի կազմը, դիրքերը, արգելքներ հաղթահարելու կարգը, դասակի, ջոկի և իր խնդիրը, հարևանների խնդիրները, դասակի կենտրոնացված կրակի հատվածները, ազդարարման, կառավարման փոխգործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, պաշտպանությանը պատրաստ լինելու ժամանակը,
3. կողմնորոշիչները, հակառակորդի կազմը, դիրքերը և գործողությունների բնույթը, դասակի, ջոկի և իր խնդիրը, կրակագիծը և գնդակոծման լրացուցիչ հատվածը, ցամաքային և օդային նշանակետերի դիտարկման և դրանց վրա կրակ վարելու կարգը, դասակի կենտրոնացված կրակի տեղամասի այն հատվածները, որոնց վրա պետք է ուղղվի ջոկի կրակը, հարևանների խնդիրները, ազդարարման, կառավարման փոխգործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, պաշտպանությանը պատրաստ լինելու ժամանակը,
4. կողմնորոշիչները, հակառակորդի կազմը, դիրքերը, դասակի, ջոկի և իր խնդիրը, հարևանների խնդիրները, հրետանու և կրակային այլ միջոցներ օգտագործելու կարգը, դասակի կենտրոնացված կրակի հատվածները, ազդարարման, կառավարման փոխգործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, պաշտպանությանը պատրաստ լինելու ժամանակը:

5

Ի՞նչ չի պարզում զինվորը հարձակման ժամանակ մարտական առաջադրանք ստանալով.

1. ցամաքային և օդային նշանակետերի դիտարկման և դրանց վրա կրակ վարելու կարգը,
2. ոչնչացման ենթակա նշանակետերը և կրակ վարելու կարգը,
3. արգելքներ հաղթահարելու կարգը,
4. հրետանու և կրակային այլ միջոցներ օգտագործելու կարգը:

6

Ի՞նչ չի պարզում զինվորը որպես դետրային գործելու առաջադրանք ստանալով.

1. շարժման ուղղությունն ու արագությունը,
2. գործողությունների կարգը հակառակորդին հանդիպելիս,
3. դիտարկման արդյունքների զեկուցման կարգը,
4. իր տեղը շրթայում:

7

Ինչպիսի՞ն է լինում տեղանքը ըստ կտրտվածության աստիճանի.

1. թույլ, ուժեղ և միջին կտրտված,
2. թույլ, միջին և խիստ կտրտված,
3. ուժեղ, շատ ուժեղ և միջին,
4. թույլ, միջին և խիստ:

8

Եթե կան մրջնանոցների բնի կլոր ուռուցիկ մաս, ապա դրանք հորիզոնի ո՞ր կողմն են ցույց տալիս.

1. հյուսիսային կողմը,
2. արևելյան կողմը,
3. արևմտյան կողմը,
4. հարավային կողմը:

9

Եթե ծառերի բները, քարերը, հին շինությունները ծածկված են մամուռով, ապա դրանք հորիզոնի ո՞ր կողմն են ցույց տալիս.

1. հյուսիսային կողմը,
2. հարավային կողմը,
3. արևելյան կողմը,
4. արևմտյան կողմը:

10

Ե՞րբ է դադարում գործել բժշկական-սանիտարական հաստատություններին տրամադրվող հովանավորությունը.

1. ենթարկվում են հակառակորդի հարձակման,
2. ընկնելով հակառակորդի ձեռքը՝ շարունակում են իրենց աշխատանքը,
3. նրանք օգտագործվում են նաև հակառակորդի դեմ ուղղված ռազմական գործողությունների մեջ,
4. տեղակայված են ռազմական օբյեկտներից հեռու:

11

Ե՞րբ է ընդունվել քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման և օգտագործման արգելման կոնվենցիան.

1. 1982թ.
2. 1972թ.
3. 2002թ.
4. 1992թ.

12

Ե՞րբ է ընդունվել հակահետևակային ականների արտադրությունը, օգտագործումը, կուտակումը, տեղափոխումը արգելող կոնվենցիան.

1. 1997 թ.
2. 1972 թ.
3. 1995 թ.
4. 1976 թ.

13

Ինչպե՞ս է կոչվում ավտոմատի փողի ակոսների միջև ընկած տարածությունը.

1. տրամագիծ
2. փողանցք
3. դաշտ
4. փականք

14

Ո՞րը ավտոմատի հետադարձ մեխանիզմի մաս չէ՝

1. շարժական ձող
2. նետիչ
3. ուղղորդիչ ձող
4. կցորդիչ

15

Որքա՞ն ժամանակահատվածում է տեղի ունենում կրակոցը.

1. 0,01-0,6 վրկ
2. 0,01-0,2 վրկ
3. 0,1-0,6 վրկ
4. 0,001-0,06 վրկ

16

Ե՞րբ չի մաքրվում ավտոմատը.

1. առնվազն տաս օրը՝ մեկ անգամ
2. դաշտային պարապմունքներից հետո
3. առնվազն շաբաթը մեկ անգամ
4. հրաձգությունից առաջ և հետո

17

Քանի՞ անգամ կարող են նվազեցնել հարվածային ալիքի, լուսային ճառագայթման ազդեցությունը պարզագույն թաքստոցները՝ բաց ճեղքերը.

1. 6-7 անգամ
2. 9-10 անգամ
3. 7-8 անգամ
4. 1,5-2 անգամ

18

Ո՞րն է կոչվում պայթյուն.

1. մեծ քանակությամբ էներգիայի անջատումն է սահմանափակ ծավալում կարճատև ժամանակահատվածում,
2. մեծ քանակությամբ էներգիայի տարածումն է ամբողջ ծավալով կարճատև ժամանակահատվածում,
3. մեծ քանակությամբ էներգիայի անջատումն է որոշակի ծավալում կարճատև ժամանակահատվածում,
4. փոքր քանակությամբ էներգիայի անջատումն է սահմանափակ ծավալում:

19

Որո՞նք սողանքի կանխարգելման միջոցառումները չեն.

1. ջրահեռացման առունների կառուցումը
2. անտառահատումները
3. կոյուղու կառուցումը
4. սելավատարների մաքրումը

20

Որո՞նք սելավի կանխարգելման միջոցառումներ չեն.

1. լանջերի կանաչապատումը
2. սելավատարների կառուցումը
3. սելավատարների մաքրումը
4. լանջերի դարավանդավորումը

21

Ինչպիսի՞ն է ուժեղ ներգործող թունավոր նյութերի ազդեցությունները՝ կախված արագությունից.

1. արագ ազդեցության, միջին ազդեցության, դանդաղ ազդեցության,
2. դանդաղ ազդեցության, թույլ ազդեցության, դանդաղեցված ազդեցության,
3. արագ ազդեցության, դանդաղեցված ազդեցության, դանդաղ ազդեցության,
4. ակնթարթային ազդեցության, արագ ազդեցության, դանդաղ ազդեցության:

22

Ի՞նչ չի սահմանում կայագորային ու պահակային ծառայությունների կանոնագիրքը.

1. գորամասի և ստորաբաժանումների հիմնական պաշտոնատար անձանց պարտականությունները,
2. կայագորային ու պահակային ծառայությունների նշանակությունը,
3. ծառայությունն իրականացնող պաշտոնատար անձանց իրավունքները, պարտականությունները,
4. գորքերի մասնակցությամբ արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման կարգը:

23

Ո՞վ է ժամապահը.

1. պահակակետը զենքով հսկողն է,
2. զինված պահակայինն է, որը պահպանում և հսկում է պահակակետը,
3. զինված պահակայինն է, որը կատարում է պահակակետը պաշտպանելու հանձնարարություն,
4. այն զինված պահակայինն է, որը կատարում է իրեն հանձնարարված պահակակետը պահպանելու և պաշտպանելու մարտական առաջադրանքը:

24

Վաշտում ո՞ր դեպքում է տրվում «Զգաստ» հրաման.

1. ուղղակի պետերի ժամանման դեպքում,
2. ուղղակի պետերի՝ սկսած վաշտի հրամանատարից և ավելի բարձր և գնդի հերթապահի ժամանման դեպքում,
3. անմիջական պետերի ժամանման դեպքում,
4. միայն գորամասի հրամանատարի ժամանման դեպքում:

25

Խաղաղ ժամանակ կին զինծառայողները օրվա վերակարգի ո՞ր կազմում չեն նշանակվում.

1. հերթապահ բժիշկ (հերթապահ բուժակ),
2. շտաբի հերթապահ,
3. հսկիչ անցագրային կետի հերթապահ,
4. թղթատար (ցրիչ):

26

Ի՞նչը հաշվի չի առնվում կարգապահական տույժ կիրառելիս.

1. զանցանքի խորությունը,
2. զանցանքի տեսակը,
3. զինծառայողի առաջադիմության ցուցանիշները,
4. հանցանքի բնույթը:

27

Ի՞նչ տույժ չի տրվում «Պետի օրինական և սահմանված կարգով տրված հրամանը ստորադասի կողմից չկատարելը, որն էական վնաս է պատճառել ծառայության շահերին».

1. կալանք՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով,
2. փոխադրել զորանոցային վիճակի մինչև երեք օր տևողությամբ,
3. պահել կարգապահական գումարտակում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով,
4. ազատազրկում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

28

Որքա՞ն է կանոնավոր վազքի դեպքում քայլի երկարությունը և շարժման արագությունը մեկ րոպեում.

1. քայլի երկարությունը 70-80 սմ, շարժման արագությունը՝ 110-120 քայլ մեկ րոպեում,
2. քայլի երկարությունը 85-90 սմ, շարժման արագությունը՝ 110-120 քայլ մեկրոպեում,
3. քայլի երկարությունը 85-90 սմ, շարժման արագությունը՝ 165-180 քայլ մեկ րոպեում,
4. քայլի երկարությունը 70-80 սմ, շարժման արագությունը՝ 165-180 քայլ մեկ րոպեում:

29

ԼՂՀ-ի մարզխորհուրդը ե՞րբ է որոշում ընդունել ԼՂՀ-ն Հայաստանի Հանրապետությանը վերամիավորելու մասին.

1. 1988թ.՝ փետրվարի 20,
2. 1988թ.՝ հունվարի 20,
3. 1989թ.՝ հունվարի 20,
4. 1989թ.՝ փետրվարի 20:

30

Ո՞վ Դավիթ-Բեկի գորախմբի հրամանատար չէր.

1. Տեր Ավետիսը
2. Թորոսը
3. Թովմասը
4. Փարսադանը

31

Ե՞րբ է տեղի ունեցել Արածանու ճակատամարտը, և ո՞վ էր հայկական կողմից այն ղեկավարում.

1. 482թ. Վահան Մամիկոնյան,
2. 703թ. Սմբատ Բագրատունի,
3. 925թ. Գևորգ Մարզպետունի,
4. Ք.ա. 68թ. Տիգրան Մեծ:

32

Ի՞նչ նպատակ էր հետապնդում 1896թ. օգոստոսի 14-ին «Բանկ Օտոմանի» օպերացիան.

1. բանկում եղած գումարների կողոպուտը,
2. պայթեցնել բանկը,
3. իրականացնել հայկական նահանգներում ծրագրված բարենորոգումները,
4. հայկական բնակավայրերին տալ ինքնավարություն:

33

Ի՞նչ սկզբունքով է կոտրված վերջույթը վիրակապվում.

1. այն դիրքում, որում եղել է վիրակապումից առաջ,
2. այն դիրքում, որում պետք է վնասվողին տեղափոխել,
3. այն դիրքում, որում պետք է գտնվի վիրակապումից հետո,
4. այն դիրքում, որում վնասվողը հայտնվել է:

34

Որո՞նք են գիտակցության խանգարման տեսակները.

1. կորած գիտակցություն, մթազնած գիտակցություն, ուշաթափություն,
2. գիտակցության կորուստ, հիշողության կորուստ, կոմա,
3. գիտակցության կորուստ, հիշողության կորուստ, ուշաթափություն,
4. մթազնած գիտակցություն, ուշազնացություն, կոմա:

35

Որո՞նք են շոկի տեսակները.

1. կարդիոգեն շոկ, անաֆիլակտիկ շոկ, վնասվածքային շոկ, այրվածքային շոկ,
2. այրվածքային շոկ, քերծվածքային շոկ, վնասվածքային շոկ, կարդիոգեն շոկ,
3. անաֆիլակտիկ շոկ, կարդիոգեն շոկ, ցավային շոկ, ալերգիկ շոկ,
4. քերծվածքային շոկ, սրտամկանային շոկ, անաֆիլակտիկ շոկ, ալերգիկ շոկ:

36

Ի՞նչ բնույթի դեզինֆեկցիաներ կան.

1. տեղային, շրջանային, համապարփակ,
2. ընթացիկ, ստուգիչ, եզրափակիչ,
3. վարակի օջախում, տնային պայմաններում, ստացիոնար պայմաններում,
4. կանխարգելիչ, ընթացիկ, եզրափակիչ:

37

Որոշել քամու ճշգրտումը, եթե քամին աջկողային է և ուժգին: Նշանակետը գտնվում է 400 մ հեռավորության վրա, հրաձգությունը վարվում է ԿԱ-74 ավտոմատից:

1. 4 թիրախի դեպի աջ,
2. 2 թիրախի դեպի աջ,
3. 2 թիրախի դեպի ձախ,
4. 4 թիրախի դեպի ձախ:

38

Որոշել քամու ճշգրտումը, եթե քամին ձախկողային է և չափավոր: Նշանակետը գտնվում է 500 մ հեռավորության վրա, հրաձգությունը վարվում է ԿՁԱ ավտոմատից:

1. 3 թիրախի դեպի ձախ,
2. 3 թիրախի դեպի աջ,
3. 2 թիրախի դեպի ձախ,
4. 2 թիրախի դեպի աջ:

39

Որոշել մինչև նշանակետը եղած հեռավորությունը, եթե նշանակետը 1.6 մ բարձրությամբ մարդատար ավտոմեքենա է և փակվում է ճկույթով:

1. 65 մ
2. 70 մ
3. 75 մ
4. 80 մ

40

Որոշել նշանակետի բարձրությունը, եթե այն երևում է հեռադիտակի սանդղակի 4 փոքր բաժանքներով և գտնվում է 700 մ հեռավորության վրա:

1. 18 մ
2. 16 մ
3. 14 մ
4. 20 մ

41

Նշանակետի բարձրությունը 80 սմ է, այն գտնվում է 200 մ հեռավորության վրա: Որոշել անկյունային մեծությունը:

1. $U = 0-03$
2. $U = 0-40$
3. $U = 0-04$
4. $U = 0-30$

42 1:100000 մասշտաբի քարտեզի վրա չափակարկինով չափվել է 6 սմ, իսկ կուրվիմետրով նույն հատվածի երթուղին՝ 9 սմ: Որոշել ուղիղ գծով և իրական երթուղով հեռավորությունները մետրերով և դրանց տարբերությունը:

1. 10000 մ, 20000 մ, 10000 մ,
2. 1600 մ, 1900 մ, 300 մ,
3. 60000 մ, 90000 մ, 30000 մ,
4. 6000 մ, 9000 մ, 3000 մ:

43 Կայծակի փայլատակումից հետո որոտի ձայնը դիտորդը լսեց 6 վրկ հետո: Որոշել կայծակի հեռավորությունը դիտորդից:

1. 2400 մ
2. 1980 մ
3. 2610 մ
4. 2750 մ

44 Մարդու հասակը 1,76 մ է: Որոշել նրա քայլի երկարությունը:

1. $\tau = 0,88$ մ
2. $\tau = 0,86$ մ
3. $\tau = 0,81$ մ
4. $\tau = 0,84$ մ

45 Հաշվել հակադարձ ազիմուտները, եթե մագնիսական ազիմուտները տրված են. $15^\circ, 295^\circ$:

1. $195^\circ, 115^\circ$
2. $175^\circ, 135^\circ$
3. $160^\circ, 310^\circ$
4. $230^\circ, 295^\circ$

46 Երեք ավտոմատավոր մինչև նշանակետը քայլերով չափել են համապատասխանաբար 360մ, 375մ և 390մ հեռավորություն: Որոշել հեռավորության միջին արժեքը:

1. 360 մ
2. 300 մ
3. 375 մ
4. 320 մ

47

Միմյանցից 24 մ հեռավորության վրա գտնվող 2 հեռագրասյունները ծածկվում են քանոնի 4 մմ բաժանքով: Որոշել հեռագրասյունների հեռավորությունը դիտորդից:

1. 2500 մ
2. 3500 մ
3. 4000 մ
4. 3000 մ

48

Համապատասխանացնել ԿԶԱ ավտոմատի (7,62 մմ) գրահար-հրկիզող գնդակի թափանցող ներգործությունը:

- | | |
|------------|--|
| ա/ 40% | 1. ամուր տոփանած ձյունապատնեշ - 500մ |
| բ/ 80%-90% | 2. չոր սոճու քառակող գերանի (20x20) դարսակույտ - 150մ |
| գ/ 70-80ամ | 3. 7 մմ հաստության գրահ (հանդիպման անկյունը 90°) - 300մ |
| դ/ 30-40ամ | 4. սաղավարտ – 1100-ից ավելի |

49

Համապատասխանացնել 1992թ. օգոստոսի 14-ին ԼՂՀ-ում ստեղծված պաշտպանական շրջանները և նրանց հրամանատարներին.

- | | |
|----------------------|---------------------------------|
| ա/ Վիտալի Բալասանյան | 1. Շուշիի պաշտպանական շրջան |
| բ/ Վաչագան Իշխանյան | 2. Մարտակերտի պաշտպանական շրջան |
| գ/ Նորայր Դանիելյան | 3. Մարտունու պաշտպանական շրջան |
| դ/ Մոնթե Մելքոնյան | 4. Ասկերանի պաշտպանական շրջան |

50

Համապատասխանացնել վարակիչ հիվանդություններն ըստ խմբերի.

- | | |
|---------------------|----------------------------------|
| ա/ կապույտ հազ | 1. արյան վարակումներ |
| բ/ որովայնային տիֆ | 2. արտաքին ծածկույթների վարակներ |
| գ/ տզային էնցեֆալիտ | 3. աղիքային հիվանդություններ |
| դ/ կատաղություն | 4. շնչառական ուղիների վարակներ |